ԾԱՆՈՒՑՈՒՄ
2024 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 14:00-ին գումարվող «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
Բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ ժողովի մասին

Ընկերություն- «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերություն
Գտնվելու վայրի հասցե- ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության Տնօրենների խորհրդի 2024 թվականի օգոստոսի 05-ի նիստում ընդունվել է թիվ 05.08.2024/1 որոշումը, որի համաձայն որոշվել է 2024 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 14:00-ին գումարել Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով (**այսուհետ՝ նաև Ժողով**)՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2024 թվականի օգոստոսի 01-ի դրությամբ:

Ընկերության բաժնետերերի 2024 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 14:00-ին գումարվող տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված է հետևյալ հարցը.

- ✓ Ընկերության կանոնադրական կապիտալի ավեցմամբ պայմանավորված՝ Ընկերության կանոնադրության փոփոխության հաստատում:

Օրակարգում ընդգրկված հարցին վերաբերող տեղեկություններին և նյութերին կարելի է ծանոթանալ և ձեռք բերել երկուշաբթիից-ուրբաթ օրերին՝ 2024 թվականի օգոստոսի 06-ից մինչև օգոստոսի 26-ը ներառյալ՝ Ընկերության կադրերի բաժնում (ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում) ժամը 10:00-ից մինչև 15:00:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու համար բաժնետերը (*անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով*) կամ նրա կողմից լիազորված անձը (*լիազորությունները հաստատված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան*) պետք է 2024 թվականի օգոստոսի 27-ին ժամը 12:00-ից մինչև 13:45-ը գրանցվի ժողովի մասնակիցների գրանցամատյանում: Գրանցումից անմիջապես հետո կտրամադրվեն ժողովի օրակարգում ներառված հարցերի քվեաթերթիկները:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ Տնօրենների խորհուրդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՎ ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ASCE GROUP 02800588